ՐԱՖՖԻՆ ԵՎ ԿՆՈՋ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՀԱՐՑԸ

Ս. Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

XIX դ. երկրորդ կեսը հայ ժողովրդի պատմության բարդ, իրադարձություններով հարուստ ժամանակահատված էր. քայքայվում էին հին, ֆեոդալական արտադրահարաբերությունները և իրենց տեղը զիջում նոր, կապիտալիստական արտադրահարաբերություններին։ Վեր բարձրացող բուրժուազիան օրակարգի հարց էր դարձնում նաև կնոջը տնային կապանքներից ազատելը և հասարակական բնույթ ստացող արտադրության մեջ նրա աշխատանքն օգտագործելը։ Այդ պրոցեսը սկզբում ծավալվեց Արևմուտքում, իսկ ճորտատիրական իրավունքի անկումից հետո մուտք գործեց նաև Ռուսաստան։ Հայ իրականության մեջ բուրժուազիայի այդ պահանջն այսպես է ձևակերպել Գր. Արծրունին՝ «էմանսիպացիայի գլխավոր հիմքը, էմանսիպացիայի հիմնական սկզբունքը անկախ գիրքն է, անկախ աշխատանքն է, ինչ աշխատանք էլ լինի, քանի որ ոչ մի աշխատանք ստոր չէ, ամեն աշխատանք ազնիվ է»[1]։

Տվյալ ժողովրդի կուլտուրական զարգացման չափանիշներից մեկն էլ կնոջ գրված դիրքն է հասարակության մեջ։ Այս իմաստով վիճակն անմխիթարական էր հայ ժողովրդի պատմության մեջ հետաքրքրող ժամանակահատվածում։ Ահա թե ինչու հայ առաջավոր մտածողները սոցիալ-քաղաքական հարցերի հետ մեկտեղ ուշադրություն էին դարձնում նաև կնոջ ազատագրման ու նրա դերի հարցին։ Պայքար ծավալելով կղերա-պահպանողական մտածելակերպի և տիրող նախապաշարմունքի դեմ, ջերմորեն պաշտպանելով կնոջ շահերը, նրանք պահանջում էին կնոջը դիտել որպես հասարակության իրավահավասար անդամ, պայմաններ ստեղծել նրա ընդունակությունների դրսևորման, զարգացման ու ծավալման համար։

Առաջադեմ դեմոկրատ մտածողների կողմից կնոջ ազատագրման հարցի արծարծման դեմ պահպանողականները ժամանակի մամուլում աղմուկ բարձրացրին, համարելով դա «անբարոյականություն», «կեղծ հառաջադիմություն», «շատ վտանգավոր երևույթ», «հայ կնոջ առաքինության ավանդական փառքի խախտում» և այլն։

«Խավարի այս պահապաններին» առաջին հրապարակային հարվածը հասցրեց «Հյուսիսափայլը»։ Իսկ այնուհետև, Թիֆլիսում հրատարակվող «Հայկական աշխարհի» էջերում 60-ական թվականներին ավելի հաճախ երևացին Զ. Գրիգորյանի, Գր. Արծրունու և ուրիշների հոդվածները, որոնց մեջ բարձրացվում էին կանանց կրթության և աշխատանքի վերաբերյալ հարցեր։ Այդ պայքարին նոր թավ ու եռանդ հաղորդեց 1872 թ. Գրիգոր Արծրունու խմբագրությամբ հրատարակվող նշանավոր «Մշակը»։ Վերջինս իր շուրջը համախմբեց ժամանակի հայրենասեր մտավորականներին և, Ռաֆֆու արտահայտությամբ, «հեղեղեց հասարակությանը մի նոր, կենդանացուցիչ հոսանքով»։ «Առողջ խոսքը բխում էր կենդանի աղբյուրից և տարածում էր դեպի ամեն կողմ նոր

---

[1] «Մշակ», 1889, № 14։

մտքեր»[2]։ Լրագիրը հենց սկզբից հանդես եկավ բուրժուական արտադրաբաղանակի պաշտպանությամբ և դրա մեջ էր տեսնում հայ իրականությունը հետամնացությունից դուրս բերելու ելքը։ «Մշակն» իր էջերում բարձրացրեց նաև կնոջ ազատագրման հարցը և ողջունեց այն ուրախալի երևույթը, որ Ամերիկայի որոշ նահանգներում կանայք արդեն նվաճել են քաղաքական ընտրություններին մասնակցելու իրավունք[3]։

Իր դրական-հասարակական գործունեությանը հիմնականում կապելով «Մշակի» հետ, այնտեղ տպագրած բազմաթիվ վեպերում և հրապարակախոսական հոդվածներում Ռաֆֆին անդրադարձել է կնոջ վիճակին և առաջադրել իր տեսակետները։ Նա գտնում էր, որ ազգի թշվառությունը սերտորեն առնչվում է նաև կնոջ ստրկական վիճակի հետ, այն սկսվում է ընտանիքից և նրա առաջին զոհը կինն է։

Հատուկ ուսումնասիրության նյութ դարձնելով հայ ընտանիքն ու կնոջ վիճակը, Ռաֆֆին եկավ այն եզրակացության, որ ընտանիքն ու կյանքը դարերով մշակել են այնպիսի սովորություններ, որոնք երկաթի օրենքի զորություն են ստացել և դրանք միանգամից խորտակել անհնար է։ Մանրամասն ու ռեալիստորեն նկարագրելով նահապետական ընտանիքի խիստ բարքերը, կնոջ կրած անլուր տառապանքներն ու չարքաշ կյանքը, Ռաֆֆին անընդունելի համարեց այն կեցությունը, որ կնոջն արգելվում է անգամ խոսել, որ ընտանեկան խիստ պայմանները աղջկան երկաթի վանդակի մեջ են պահում[4]։ Եվ մեծագույն ողբերգությունն էլ հենց այն է, որ դեռ վաղ հասակից աղջիկը հաշտվում է իր վիճակի հետ. «նա մանկությունից հասկանում է. թե ինքն իրավունք չունի պահանջել, որ իր հետ մեղմ լինեին, քաղցրությամբ վարվեին, որովհետև նա աղջիկ է»[5]։ Տանը նա ավելորդ բեռ է։

Նահապետական գերդաստանում «ամուսին այրը,— գրում է Ռաֆֆին,— չէ կարող պաշտպան հանդիսանալ կնոջ տանջանքները թեթևացնելու համար։ Եվ մի՞թե նա կարող է հասկանալ թե նրա (կնոջ— Ս. Գ.) կրածները տանջանք է...»[6]։

Ռաֆֆին փորձում է բացատրել, թե ե՞րբ և ինչպե՞ս առաջ եկավ կնոջ բացարձակ իրավազուրկ վիճակը թե՛ ընտանիքի և թե՛ հասարակության մեջ։ Նա գտնում է, որ նահապետական ընտանիքը առաջ եկավ մարդկային հասարակության զարգացման որոշ էտապում, որպես անհրաժեշտություն։ Այդ ընտանիքում գլխավոր դերը պատկանում է աշխատող ձեռքին և ֆիզիկական ուժին։ Լինելով ֆիզիկապես թույլ էակ, կինն աստիճանաբար կորցրեց իր դիրքը և մղվեց հետին պլան։ Ընտանիքի միավորված լինելն անհրաժեշտ էր նաև արտաքին վտանգին դիմադրելու համար։ Ըստ Ռաֆֆու, հայկական գերդաստանի ներդաշնակությունը չխախտելու, երկպառակություններ չառաջացնելու համար էր նաև, որ կնոջը ստիպեցին լռել ու հնազանդվել[7]։

---

2 Ռ ա ֆ ֆ ի, Երկերի ժողովածու, Երևան, 1964, հ. 9, էջ 449։
3 «Մշակ», 1887, № 27։
4 Ռ ա ֆ ֆ ի, նշվ. աշխ., էջ 327։
5 Նույն տեղում, էջ 322 (ընդգծումը հեղինակինն է)։
6 Նույն տեղում, էջ 332։
7 Նույն տեղում, էջ 357—359։

Լինելով դեմոկրատ ու հումանիստ, պայքար ծավալելով առհասարակ ճնշման և բռնության դեմ, Բաֆֆին կնոջ փրկությունը, որպես շահագործվող սեռի, տեսավ ոչ թե կրոնի, ավետարանի և ապաշխարանքի մեջ, այլ շեշտը դրեց հարցի լուծման սոցիալական կողմի վրա։ Նա պաշտպանեց այն ճշմարիտ թեզը, որ առհասարակ անկախության հասնելու համար կանայք պետք է ձգտեն նախ և առաջ տնտեսական անկախության, որ նրանց հնարավորություն կտա առավել ազատ և անկախ լինել մյուս սեռի բարեհաճությունից կամ անբարեհաճությունից։ Ըստ Բաֆֆու, դա հասարակական-քաղաքական կոնկրետ պայմաններում կնոջ ստրկական վիճակից դուրս գալու միակ հնարավոր ելքն էր։ Ահա թե ինչու նա հասարակությունից պահանջում էր աշխատունակ դարձնել կնոջը, նրան կրթել, մասնագիտություն սովորեցնել և հնարավորություն տալ աշխատելու հասարակական արտադրության այս կամ այն բնագավառում։ «Երբ կնոջ գործունեությունը սահմանափակվում է ընտանեկան «օջախի» շուրջը — ահա այս է, որ նրան փոքրացնում է և շինում է բոլորովին կրավորական էակ»,— գրում է Բաֆֆին[8]։ Աշխատանքը միայն կարող է «բարձրացնել կնոջ վիճակը և նրան հավասար աստիճանի վրա դնել տղամարդի հետ։ Երբ կինը ազատ պարապմունք ունի, երբ նա էլ իր կողմից օգնում է ընտանիքին, այսպիսով, նա կախում չի ունենա տղամարդից և կգցե իր վզից նրա բռնության կոպիտ լուծը։ Տղամարդն էլ իր կողմից կունենա դեպի նա, բացի սերից, մի առանձին պատիվ, երբ կգտնի նրա մեջ մի լավ աշխատակից»[9]։

Առաջադրելով կնոջ ազատագրման նման ուղի, Բաֆֆին ամենից առաջ նկատի ուներ միջին դասի, արհեստավորների կանանց, որոնց կյանքը նույնպես լի էր դառնություններով ու թշվառությունով, որոնք նույնպես արհամարհված էին ինչպես իրենց ամուսինների, այնպես էլ ամբողջ հասարակության կողմից։ Նա հաստատ համոզված էր, որ աշխատանքն է այն միակ հիմքը, որը բարոյական կործանումից ետ կպահի կնոջը։ Երբ կինն աշխատունակ է, երբ նա «մի բան գիտե» գա արդեն նշանակում է, որ նա իր մեջ ունի «կենդանի կապիտալ», իսկ դրան հասնելու համար նախ և առաջ «պետք է փոխել հասարակական հիմար նախապաշարմունքները և պետք է նրան (կնոջը—Ս. Գ.) դուրս քաշել ընտանիքի փակված շրջանից»[10]։

Ուրեմն պետք է պայքարել այն երևույթների դեմ, որոնք կաշկանդում, արգելք են հանդիսանում կյանքի առաջընթացին, կանանց դաստիարակությանն ու կրթությանը, նրանց հայրենանվեր ու հասարակական գործունեությանը։ Այս գաղափարները մարմնավորվեցին Բաֆֆու գեղարվեստական գործերում։ «Խենթը», «Կայծեր» և «Խաչագողի հիշատակարան» վեպերը լույս տեսնելուց հետո «Մեղու Հայաստանին» լցվեց հերթական վայրախոսություններով։ Կղերամիտ Հայկունին նրան մեղադրեց նահապետական ընտանիքի բարքերը ոտնահարելու մեջ։ «Ամեն մարդ էլ դատավոր, խրատատու և քննիչ է դարձել... Ընտանիք և ընկերական հարաբերությունք, գիտությունք և սրբությունք— և ամեն բան, ոտքից ցդլուխ քննվում, խորտակվում և ջախջախվում է»[11],— գրում է նա և այս ամենի համար մեղադրում «ՄշակինՀ ու մշակականներին։

---

8 Նույն տեղում, էջ 373։
9 Նույն տեղում, էջ 344։
10 Նույն տեղում։
11 «Մեղու Հայաստանի», 1883, № 106։

Թևակոխելով կապիտալիստական արտադրահարաբերությունների փուլը, XIX դարի երկրորդ կեսին անդրկովկասյան քաղաքն ու գյուղը աստիճանաբար կերպարանափոխվում էին։

Դա մի տեսակ անցման շրջան էր, երբ սկսվել էին խարխլվել հին կապանքներն ու հին հարաբերությունները և ձևավորվում էին նոր հարաբերություններ։ Փոխվում էին կեցության հին ձևերը և, չնայած դեռ շարունակում էր հիմնականում տիրապետող մնալ նահապետական ընտանիքը, բայց համեմատաբար ազատ էին դառնում բարքերը հատկապես արդյունաբերական կենտրոններում։ Նոր պայմաններում առաջացած ընտանիքի ծավալն ավելի փոքր էր, այժմ այն կազմված էր հիմնականում ծնողներից և երեխաներից։ Այստեղ արդեն փոխվում էր և կնոջ դիրքը։ Ամուսինն իր շահերով կապվում էր միայն իր կնոջ հետ և նրա հետ վերաբերվում նաև որպես ընկերոջ։ Ընտանիքում կնոջ այս նոր վիճակը փոխում է նաև նրա հասարակական դիրքը[12]։ Սա, իհարկե, հասարակության աշխատավորական խավերում։ Սակայն, նկարագրելով Թիֆլիսի նորաթուխ բուրժուազիայի կենցաղը և քաղքենի միջավայրը, Բաֆֆին շեշտում է այն հանգամանքը, որ այս բարձր դասի մեջ կինը սկսել է օտարանալ, չի խոսում մայրենի լեզվով, «զզվանքով է նայում» ազգային ավանդույթներին։ Այստեղ «օտարացումը գտնվում է իր տգետ այլանդակության մեջ,— գրում է Բաֆֆին։— Ընտանիքը խլվելով մայրենի բնական հողից, դեռևս հաստատ հիմք չէ ձգել օտար հողի վրա։ Նա տատանվում է որպես մի ծառ, որ արմատ չունի»[13]։

Այդ ամենից, իհարկե, չի կարելի եզրակացնել, որ Բաֆֆին Արևմուտքի կենցաղը և բարքերը համարում է չարիք։ Ոչ, նա չարիք է համարում դրանց ձևական, մակերեսային ընկալումը։ Խոր ցավով նա խոսում է օտարամոլ հայ աղջիկների մասին, որոնք «հագել են եվրոպացու հագուստը, բայց դեռ չեն ստացել նրա կրթությունը»[14]։ Նկարագրելով հասարակության վերնախավերի ընտանիքներում երեխաների դաստիարակությունը, Բաֆֆին նշում է, որ այստեղ փոքր հասակից աղջկան կրթում են, «տաշում, կոկում» և դարձնում մի «մոդնի կուկլա», որը «ոչ սիրտ ունի, ոչ միտք»[15], և նրան ամենևին չեն մտահոգում ազգի ցավերը։ Մեծ մտածողի անհանգստությունը լուրջ հիմքեր ուներ։ Հակադրվելով ազգության կղերական պատկերացմանը, Բաֆֆին պաշտպանում էր ժամանակի առաջավոր հասարակական գործիչների այն տեսակետը, ըստ որի լեզուն էր ազգության անհրաժեշտ ֆակտորներից մեկը։ Ազգային լեզվի պահպանումն ու զարգացումը քաղաքական մեծ նշանակություն էր ստանում և դիտվում որպես հայ ազգի համախմբման, նրա գոյության և հարատևման անհրաժեշտ պայման։ Օտարամոլությունը և օտարացած ընտանիքներում երեխաներին տված դաստիարակության սխալ ուղղությունը կարող էր մեծապես խանգարել ազգի ինքնաճանաչությանը և հարված հասցնել հայ ժողովրդի քաղաքական նպատակների իրականացմանը։ Լուսավորյալ, քաղաքակրթված ազգը ավելի հավաքական է, ավելի գիտակից։ Ահա թե ինչու Բաֆֆին լուսավորական դեմոկրատական հայացքները սերտորեն կապում էր հայ ժո-

---

12 Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 359։
13 Նույն տեղում, էջ 366։
14 Նույն տեղում, էջ 353։
15 Նույն տեղում, էջ 367։

ղովրդի ինքնագիտակցության արթնացման, ազգի ձևավորման, նրա միասնության, մտավոր վերածննդի և նրա ազատագրական պայքարի հետ։ Նա կնոջը մեծ դեր էր վերապահում ինչպես ժողովրդի ընդհանուր առաջընթացի, այնպես էլ արդեն օրակարգի հարց դարձած ազգային-ազատագրական շարժման գործում։ Ժողովրդի ընդհանուր դաստիարակությունն ու լուսավորությունը Ռաֆֆին հաջողված էր համարում միայն այն դեպքում, երբ կանայք ակտիվ մասնակցում են այդ գործին[16]։ Ազգի հիմքը ընտանիքն է, ուր երեխան ստանում է իր առաջին և կարևոր դաստիարակությունը։ Այստեղ մեծ անելիք ունի կինը, երեխային տված նրա դաստիարակությունը պետք է ունենա հեռուն տանող նպատակներ, նա դեռ օրորոցում պետք է երեխայի ականջին հնչեցնի Աղասու մոր երգը։ Առաջինը մայրն է, որ պետք է երեխայի մոտ սերմանի ազատության, հայրենիքի և հայրենասիրության գաղափարը, կրթի նրան, իսկ դրա համար կրթված պետք է լինի նախ և առաջ հենց ինքը՝ կինը։ Այս հարցում ընդհանուր շատ բան կա Ռաֆֆու և Գր. Արծրունու հասարակական-քաղաքական հայացքների մեջ։ Երկուսն էլ կանանց կրթության հարցը դիտում էին ոչ միայն աշխատանքի շուկայում նրանց աշխատուժի օգտագործման տեսանկյունից, այլ նաև շրջանցիկ ձևով այն կապում էին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հարցերի հետ։ Լինելով ժամանակի առաջավոր դեմոկրատ մտածողներից մեկը, Ռաֆֆին կանանց կրթությանն ու լուսավորությանը մեծ նշանակություն էր տալիս նաև այն իմաստով, որ այն կարող էր նպաստել կնոջը ստրկական վիճակից դուրս բերելուն։ «Հայ կինը» ծավալուն ուսումնասիրության մեջ նա շարադրում է իր լուսավորական ու փիլիսոփայական հայացքները։ «Մեծ բարերարություն արած կլինի կնոջ սեռին այն մարդը, որ լուսավորության կայծը կմտցնի ամենախուլ գյուղական խրճիթներում. այդ լույսը միայն կարող է նրան (կնոջը— Ս. Գ.) առաջնորդել և դուրս բերելով տնային փակ շրջանից, կանե նրան հասարակական ընկերության անդամ»[17]։

Իր հասարակական-քաղաքական գործունեության ընթացքում Ռաֆֆին բավական գործ է կատարել այդ ուղղությամբ։ Թավրիզում աշխատելու տարիներին նա մեծ ջանք գործադրեց օրիորդաց ուսումնարան հիմնելու ուղղությամբ և իր կնոջ՝ Աննա Ռաֆֆու հետ միասին հանձն առավ, առանց վարձատրության, դասավանդել այդ դպրոցում[18]։ 1876 թ. կաթողիկոսի աջակցությունը և օժանդակությունը ստանալու նպատակով, Ռաֆֆին մեկնեց Էջմիածին և ստացավ նրա հավանությունը։ Սակայն անկարելին դեռ առջևում էր։ Առավել դժվարինը Թավրիզի հայերի մեջ դարեր ի վեր բուն դրած ասիական նախապաշարմունքն ու համառությունը կոտրելն էր, տեղի կղերամիտների դեմ պայքարը, որոնք միջոցների մեջ խտրություն չէին դնում մեծ վիպասանին վարկաբեկելու և նրա ձեռնարկած հայրենանվեր գործը ձախողելու համար։ Այս ամենը, ցավոք, ավարտվեց նրանով, որ իգական դպրոցի հիմնադրման Ռաֆֆու լավագույն ծրագրերը մնացին անկատար։

Լինելով հմուտ և առաջադեմ մանկավարժ, Ռաֆֆին առաջիններից էր, որ հանգամանորեն քննության առավ հայ դպրոցի և մանկավարժության տեսա-

---

16 Այս մասին մանրամասն տե՛ս Ե. Պետրոսյան, Ռաֆֆի, Երևան, 1959, էջ 225—227։

17 Ռաֆֆի, նշվ. աշխ., էջ 360։

18 Խ. Սամվելյան, Ռաֆֆի, Երևան, 1957, էջ 51—53։

կան հարցերը, հրապարակ հանեց ազգային դաստիարակության գլխավոր թեզերը։ Պայքար ծավալելով կղերաավատական դպրոցի սկզբունքների դեմ, Գր. Արծրունին և Բաֆֆին պաշտպանեցին աշխարհիկ կրթության և երկսեռ ուսուցման սկզբունքը։ Բաֆֆին այն կարծիքին էր, որ երկսեռ դպրոցները կարող են մեծ չափով նպաստել փշրելու «տիրող հին նախապաշարմունքի կապանքը, որ աղջկանից պատրաստում է կանանոցի գերի և խլում է նրանց տղամարդի հասարակությունից»[19]։ Սա Բաֆֆու հերթական հարվածն էր նահապետական նախապաշարմանը։ Ըստ նրա, կանանց կրթությունն ու դաստիարակությունը պետք է ընթանային այն ուղղությամբ, որ դրանց հիմնական նպատակը լիներ նախապատրաստել կնոջը կյանք մտնելու, օգնել նրան ձեռք բերելու կյանքի անակնկալներին, չարիքներին դիմակայելու և ելք գտնելու ունակություններ։ Այս ամենով հանդերձ, Բաֆֆու առաջադրած տեսակետը ուտոպիստական էր։ Թեև նա հանդես եկավ որպես իր ժամանակի առաջադիմական հայացքների արտահայտիչ, բայց նրա ֆեմինիզմն ուներ որոշ սահմանափակություններ։ Այսպես, իր «Հայ կինը» հոդվածում նա ուրվագծում էր կանանց աշխատանքի միայն որոշակի շրջանակ և ծայրահեղություն համարում կնոջը բժիշկ, գրող, դատավոր դառնալը։ Ըստ Բաֆֆու, այս ամենին կինը կարող է հասնել միայն հեռավոր ապագայում, որը նա պատկերել է Խենթի հայտնի երազում։

Կողմնակից լինելով զարգացման նոր ընթացքին, Բաֆֆին, սակայն, այն կարծիքին էր, որ, այնուամենայնիվ, հասարակության առաջընթացը կարելի է հաշտեցնել հայ ընտանիքի լավագույն յուրահատկությունների պահպանման և բարոյական այնպիսի նորմաների հետ, ինչպիսիք էին կնոջ համեստությունը, ամոթխածությունը, ընտանիքին և ամուսնուն նվիրվածությունն ու հավատարմությունը։ Նա չկարողացավ ըմբռնել, որ բարոյական նորմաները նախ պատմական են, իսկ իր տված դեղատոմսերը անհամատեղելի են զարգացող բուրժուական հարաբերությունների և կապիտալի հետ, որ վերջինս ճանաչում է միայն մեկ բարոյական նորմա՝ շահը. «մերկ, անսիրտ շահը»։ Կոմունիստական մանիֆեստը բացահայտեց այն ճշմարտությունը, որ բուրժուազիան ամենուրեք «խորտակեց բոլոր ֆեոդալական, նահապետական իդիլիական հարաբերությունները... Մարդկանց միջև ոչ մի այլ կապ չթողեց, բացի մերկ շահից, անսիրտ «կանխիկ հաշվից»... Նա մարդու անձնական արժանապատվությունը վերածեց փոխանակային արժեքի»[20]։

Իշխանության ձգտող բուրժուազիան ամենուրեք, ի լուր աշխարհի, որպես երկու սեռերի սրբազան իրավունք հայտարարեց ազատ սիրո վրա հիմնված ընտանիքը։ Բայց միայն հայտարարեց։ Մարքսն ու Էնգելսը «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» նշում են, որ բուրժուազիան ամենուրեք, ուր տիրապետության հասավ «...պատռեց սրտաշարժ-սենտիմենտալ քողը ընտանեկան հարաբերություններից և դրանք վերածեց զուտ դրամական հարաբերությունների»[21]։ Այլ կերպ ասած, դառնալով իշխող դասակարգ, պրակտիկայում բուրժուազիան իսկական ստրկությունը փոխեց վարձու ստրկացման, ըս-

---

19 Բ ա ֆ ֆ ի, նշվ. աշխ., էջ 325։

20 Կ. Մ ա ր ք ս և Ֆ. Է ն գ ե լ ս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1968, էջ 70։

21 Նույն տեղում, էջ 71։

տեղծեց մի հասարակարգ, ուր իսկապես ազատորեն կնքված ամուսնությունները բացառություն են։ Լինելով իրականության խոր և ռեալ զգացողությամբ օժտված հասարակական գործիչ, Բաֆֆին շեշտը գրեց այն օրինաչափության վրա, որ հայ բուրժուական ընտանիքներում նույնպես ամուսնության մեջ գլխավոր դերը կատարում է «հաշիվը», այստեղ «ամուսնական կապը դառնում է փողը... Սերն ամենևին դեր չունի այս դասի ամուսնության մեջ»[22]։ Նման պայմաններում և նման հասարակության մեջ պայքարը սիրո հաղթանակի համար Բաֆֆին հերոսություն է համարում։ Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» պիեսի բեմադրության առթիվ «Մշակում» տպագրած հոդվածում նա ցավով է նշում, որ գլխավոր հերոսների երջանկության ձգտումը անհավասար գոտեմարտ է շահի, ստի ու կեղծիքի վրա հիմնված հասարակության հետ, որն ի վերջո վեր է ածվում հակադրության։ Բաֆֆին այն կարծիքին է, որ չնայած ահավոր դժվարություններին, սեփական իրավունքների պաշտպանության և սիրո հաղթանակի համար պետք է շարունակել համառ ու տևական պայքարը. «...Միքայելը և Անանին նոր պատերազմողներ են,— գրում է Բաֆֆին պիեսի գլխավոր հերոսների մասին,— նրանք պետք է ընկնեին, որովհետև կանգնած էին կռվողների առաջին շարքում, իսկ նրանց դիակների վերայից կանցնեն նոր հերոսներ, որոնք առաջ կտանեն հաղթության դրոշակը...»[23]։ Ապագան պատկանում է փոխադարձ հակումների և աղատ սիրո վրա հիմնված ընտանիքին։

Կանանց ազատագրման հարցում, որպես հիմնական գործոններ առաջ բաշելով տնտեսական անկախությունը և կրթությունը, դրանով Բաֆֆին դուրս չեկավ հարցի լուծման բուրժուա-դեմոկրատական շրջանակներից։ Բայց, եթե հաշվի առնենք սոցիալական, հասարակական-քաղաքական այն միջավայրն ու ժամանակը, ուր ապրում և գործում էր Բաֆֆին, ապա նրա հարցադրումը ժամանակի առաջադեմ մտածելակերպն էր։ Օբյեկտիվ պայմանների ու հանգամանքների բացակայության պատճառով ինչպես Բաֆֆին, նույնպես և ժամանակի հայ առաջավոր մտածողներից և ոչ մեկը չկարողացան գտնել կանանց լիակատար ազատության ճիշտ ուղին, չկարողացան կապել այն աշխատավոր դասակարգի հասարակական ազատագրման հետ, տեսնել, որ կանանց վերջնական ազատագրումը հնարավոր է միայն մասնավոր սեփականության ու անտագոնիստական հակասությունների վերացման և դրանցից բխող հասարակական չարիքների հետ միաժամանակ։ Այլ կերպ ասած, այդ հարցի լուծումը չկարողացան կապել սոցիալական ընդհանուր հարցի հետ։ Այս սահմանափակության հիմնական պատճառն այն էր, որ անցյալ դարի երկրորդ կեսին հայ իրականության մեջ չկային կնոջ լիակատար ազատագրման անհրաժեշտ պայմաններ, «բուրժուազիայի գերեղմանափոր» պրոլետարիատը Անդրկովկասում դեռ նոր էր ձևավորվում որպես դասակարգ։

Դասակարգային հասարակության մեջ կնոջ և աշխատավորի ընդհանուրն այն է, որ երկուսն էլ շահագործվում են։ Շահագործման ձևերը տարբեր դարերում տարբեր են եղել։ Պատմական զարգացման տարբեր էտապներում, երբ շահագործվողը գիտակցել է, որ իրեն շահագործում են, այդ գիտակցությունն օգնել է նրան ըմբոստանալու, պայքարելու, վերափոխելու, բարելավելու իր վիճակը։ Դարեր շարունակ գոյություն ունեցող հարաբերությունները և կնոջ

22 Բաֆֆի, նշվ. աշխ., էջ 364—365։
23 Նույն տեղում, էջ 118։

վիճակը սերունդներին են անցել ժառանգականության ու դաստիարակության միջոցով և կնոջ կողմից համարվել «բնական»։ Այստեղից էլ՝ կենսական անհրաժեշտություն էր աշխատավոր կնոջ գիտակցությանը հասցնել այն ճշմարտությունը, որ ինքը շահագործվում է, օգնել նրան ինքնագիտակցության գալու և կոտրելու շահագործման դարավոր կապանքները։ Այս ուղղությամբ հասարակական մեծ և անհրաժեշտ գործ է կատարել Ռաֆֆին, ժամանակի առաջավոր մամուլի էջերում նկարագրելով հայ կնոջ տառապալից վիճակը, տալով նրա ստրկական և «կրավորական» դրության խորը և ռեալիստական նկարագիրը, պահանջելով կնոջը դարձնել ընտանիքի և հասարակության լիիրավ անդամ։ Սրանով Ռաֆֆին առաջընթաց քայլ կատարեց հայ կնոջ զարթոնքի գործում։

РАФФИ И ВОПРОС ЭМАНСИПАЦИИ ЖЕНЩИН

С. З. ГЕВОРКЯН

Резюме

Освобождение женщины и использование ее труда в области общественного производства диктовалось развитием новых форм производственных отношений в Закавказье второй половины XIX в. Передовые мыслители того времени боролись за равноправное положение женщины в обществе и создание условий для выявления и развития ее способностей к общественному труду.

Будучи представителем прогрессивной демократической мысли, Раффи защищал и пропагандировал необходимость приобщения женщины к общественно полезному труду для достижения материальной независимости, являющейся первоочередным условием ее независимости вообще. Важнейшее значение в деле эмансипации женщин Раффи придавал образованию и был сторонником совместного обучения в школах. С вопросом образования женщин он тесно связывал проблему воспитания подрастающего поколения и осуществление политических целей армянского народа. Огромное значение Раффи придавал роли женщины в национально-освободительном движении.